

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի 2017թ կատարված աշխատանքների վերաբերյալ

#### Տեղական, մարզային և միջպետական նշանակության Ավտոմոբիլային ճանապարհներ

- 1) Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 157.1 կմ,
- 2) Հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 148.0 կմ,
- 3) Մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ՝ 389.4 կմ:

Մարզում առկա են 48 միջպետական, 13 հանրապետական և համայնքային նշանակության 38 կամուրջներ: ՀՀ Արագածոտնի մարզի միջպետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք վիճակում են:

#### ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2017 թ. Պետական բյուջեով Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար հատկացվել է 127.815.0 մլն. դրամ: Նշված ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է 389.4 կմ՝ 68.7 մլն. ՀՀ դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 67.68 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 59.1 մլն. ՀՀ դրամ արժեքով:

ՀՀ 2017 թ. Պետական բյուջեով Արագածոտնի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար հատկացվել է 398.0 մլն. ՀՀ դրամ:

ՀՀ 2016-2017թթ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվել են.

1. Մ3-Քուչակ-Եղիպատրուշ մարզային նշանակության 8.7 կմ ավտոճանապարհի և 0.9կմ համայնքային ավտոճանապարհի հիմնանորոգում 691.0 մլն ՀՀ դրամ արժեքով, որից 2016-ին՝ 140.0մլն. ՀՀ դրամ, իսկ 2017-ին՝ 551.0 մլն. ՀՀ դրամ : Աշխատանքներն ավարտվել են:
2. Մ-3-Քուչակ-Արագած-Շենավան-Մ-3 մարզային նշանակության 3.9 կմ ավտոճանապարհի հիմնանորոգում 371.0 մլն ՀՀ դրամ արժեքով ,որից 2016-ին՝ 134.0 մլն. ՀՀ դրամ, իսկ 2017-ին՝ 237.0 մլն. ՀՀ դրամ: Աշխատանքներն ավարտվել են:

3. 2017թ. ընթացքում Քուչակ համայնքի տարածքում պետբյուջեով կատարվել է 0.85 կմ հատվածի ասֆալտապատում՝ 80.0 մլն. ՀՀ դրամ արժեքով:
4. 2017թ-ին 48.0մլն. ՀՀ դրամ արժեքով հիմնանորոգվել է Արտաշավան-Բյուրական ավտոճանապարհի 310մ հատվածը : Աշխատանքներն ավարտվել են:
5. 2017 -2018թթ . ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվելու է Հ-4 Երևան-Եղվարդ-Արագյուղ-Հարթավան-Մ-3 հանրապետական նշանակության ավտոճանապարհի 5.1 կմ հատվածի հիմնանորոգում 414.0մլն. ՀՀ դրամ արժեքով ,որից 204.7մլն. ՀՀ դրամը 2017-ին և 2018-ին՝ 209.3մլն. ՀՀ դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Մ-1 Երևան-Լանջիկ միջպետական նշանակության Ա/Ճ-ի /Հյուսիս-Հարավ/ հատվածի վրա 2017թ.-ից կատարվում է 9 մլրդ 964 մլն 286 հազար ՀՀ դրամ արժեքով աշխատանքներ Ասիական բանկի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

2017թ. Ասիական բանկի միջոցներով հիմնանորոգվել է Մ1-Թալին-Մ1 մարզային նշանակության 2.5կմ հատվածը 141մլն. 100 հազար ՀՀ դրամ արժեքով:

2018 թվականին մարզում ճանապարհաշինության ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը կկազմի 11.3 մլրդ. դրամ գումար, որը կուղղվի հանրապետական, մարզային, համայնքային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման և կահավորման աշխատանքների իրականացմանը:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզի 114 համայնքներից 73-ում գործում են միջմարզային կանոնավոր 27 ուղևորափոխադրումներ, 3 համայնքում գործում է ներմարզային մեկ երթուղի, իսկ 39 համայնքում ուղևորափոխադրումներ չեն իրականացվում ճանապարհների վատ վիճակի և ուղևորահոսքի պակասի պատճառով:

2018թ. ևս ծրագրվում է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը: Մարզի խոշորացված համայնքերում թույլատրել իրականացնել ներհամայնքային (բնակավայրերը համայնքային կենտրոնին կապող) երթուղային ցանցի ձևավորում և ուղևորների կանոնավոր փոխադրումների կազմակերպում: Նման օրինակ է հանդիսանում Ապարան համայնքը, որի խոշորացումից հետո ստեղծվել է ներհամայնքային 5 երթուղի, որը սպասարկում է 16 բնակավայր:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Անհրաժեշտ է նշել Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը՝ որպես ճանապարհաշինական ենթակառուցվածքների բարելավում, որն էական ազդեցություն կունենա բեռնա և ուղևորափոխադրումների ժամանակի կրճատման, հետևաբար՝ ինքնարժեքի նվազեցման վրա:

## ԳԱԶԻՏԻԿԱՑՈՒՄ

Մարզի 114 համայնքներից 63-ում կան գազասպառողներ, իսկ բաժանորդների թիվը կազմում է 18264:

2017թ. համայնքային բյուջեներից կատարվել են համայնքների ներտնտեսային ցանցերի ավելացման և բարեկարգման աշխատանքներ 33.0 մլն. ՀՀ դրամ արժեքով: 2018թ. ևս նախատեսվում է կատարել նմանատիպ աշխատանքներ:

Չգազիֆիկացված համայնքները 51-ն են:

## ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

2017թ. մարզի տարածքում հիմնականում ապահովվել է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Այդ ընթացքում «ՀԷՑ» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաճյուղի միջոցով ամբողջությամբ վերանորոգվել և փոխարինվել է 185 հենասյուն: Հսկողություն է իրականացվել բարձրավոլտ էլեկտրասյուների տակ տարվող աշխատանքների դադարեցման ուղղությամբ:

2017թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից Թալին քաղաքում կատարվել է «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր՝ 3.1 մլրդ. ՀՀ դրամ արժեքով:

2018թ. նախատեսվում է կատարել ևս 1.3 մլրդ. ՀՀ դրամի աշխատանքներ:

2017թ. ՀՀ Արագածոտնի մարզի 7 համայնքում հրատապ ծրագրով իրականացվել է 24 մլն. ՀՀ դրամի փողոցային լուսավորության աշխատանքներ:

2017թ. ՀՀ Արագածոտնի մարզում ոչ պետական միջոցներով կառուցվել է Հայաստանում ամենամեծ՝ 1 ՄՎտ հզորությամբ Թալին-1 արևային կայանը՝ 400.0 մլն. ՀՀ դրամ:

## ԿԱՊ

ՀՀ Արագածոտնի մարզում բջջային հեռախոսակապի ծառայություն են մատուցում 3 օպերատորներ՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ, «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ, «ԱրմենՏել» ՓԲԸ:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ը ՀՀ Արագածոտնի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: